| | |
|---|---|
| 1 սեպտեմբերի 2025թ.-ի հրաման<br>Հավելված 1<br>Տնօրեն՝ Հովակ Հովակիմյան<br>_______________ | Приложение 1<br>К приказу 1 сентября 2025г.<br>Директор: О. Овакимян<br>_______________ |
| «ՄԱՍՆԱԿՑԻ՛Ր ԴԱՍԸՆԹԱՑԻՆ, ԴԱՐՁԻ՛Ր ԲԱԺՆԵՏԵՐ»<br>**ՊՐՈԴՈՒԿՏԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ** | **УСЛОВИЯ ПРОДУКТА<br>"УЧАСТВУЙ В ВЕБИНАРЕ, СТАНЬ АКЦИОНЕРОМ"** |
| 1. **Պրոդուկտի բովանդակությունը և նպատակը**.<br>1.1 «Ֆրիդոմ Ֆինանս Արմենիա» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն), նոր հաճախորդներ ներգրավելու՝ արժեթղթերի շուկայում բրոքերային ծառայություններից օգտվող հաճախորդների ներգրավման նպատակով, նախաձեռնում է «Մասնակցի՛ր դասընթացին, դարձի՛ր բաժնետեր» պրոդուկտը (այսուհետ՝ **Պրոդուկտ**), որի շրջանակներում ֆիզիկական անձինք, Կանոններով սահմանված պայմաններին համապատասխանելու/հետևելու դեպքում, հնարավորություն ունեն Ընկերությունից ստանալ նվեր: | 1. **Содержание и цель продукта:**<br><br>1.1 **ООО «Фридом Финанс Армения»** (в дальнейшем – Компания) с целью привлечения новых клиентов, пользующихся брокерскими услугами на рынке ценных бумаг, инициирует продукт «Участвуй в вебинаре, стань акционером» (далее- **Продукт**), в рамках которой физические лица, при соблюдении/выполнении условий, установленных Правилами, получают возможность получить подарок от Компании. |
| 2. **Պրոդուկտի պայմաններ**.<br>2.1 Պրոդուկտից օգտվելու հնարավորություն ունեն այն անձինք, ովքեր կհամապատասխանեն/կհետևեն հետևյալ պայմաններին միաժամանակ.<br>2.1.1 Պրոդուկտի գործողության ընթացքում գրանցվել է «Say Hello to Investments» վեբինարին (այսուհետ նաև՝ **Վեբինար**) և դիտել է Վեբինարը 10 րոպե և ավել տևողությամբ, և<br>2.1.2. Վեբինարի ավարտի օրվանից հետո 7 օրվա ընթացքում Ընկերության պաշտոնական կայքում հրապարակված «Ֆրիդոմ Ֆինանս Արմենիա» ՍՊԸ-ի «Գործարար հիմնական պայմաններին» | 2. **Условия Продукта**:<br>2.1. Возможность воспользоваться Продуктом имеют те физические лица, которые соответствуют/следуют следующим условиям одновременно:<br>2.1.1. Зарегистрировался(лась) на вебинар «Say Hello to Investments» (далее — Вебинар) и просмотрел(а) Вебинар продолжительностью не менее 10 минут, и<br>2.1.2. В течение 7 календарных дней с даты завершения Вебинара открыл(а) Брокерский счёт в Компании в соответствии с «Основными условиями бизнеса» ООО «Фридом Финанс Армения», опубликованными на официальном сайте |

| | |
|---|---|
| (հղումը՝ https://ffin.am/documents/) համապատասխան բացել են Բրոքերային հաշիվ Ընկերությունում, և<br>2.1.3 Հաճախորդը համապատասխանում է սույն Պայմաններով սահմանված բոլոր պահանջներին և/կամ չի խախտել սույն Պայմաններով սահմանված պահանջներից որևիցե մեկը և/կամ չի խախտել Ընկերության հանդեպ ստանձնած ցանկացած այլ պարտավորություն: | Компании (ссылка: https://ffin.am/documents/).<br><br>2.1.3 Клиент соответствует всем требованиям, установленными настоящими Условиями, и/или не нарушил ни одно из требований, предусмотренных настоящими. Условиями, и/или не нарушил какие-либо иные обязательства перед Компанией. |
| **3.Պրոդուկտի գործողության ժամկետը.**<br>3.1.Պրոդուկտը և սույն Պայմաններն ուժի մեջ են մտնում Ընկերության կայքէջում հրապարակման պահից և գործում են մինչև Ընկերության կողմից պրոդուկտը և սույն Պայմանները միակողմանիորեն դադարեցվելը: | **3. Период действия Продукта**:<br>3.1. Продукт и настоящие Условия вступают в силу с момента публикации на сайте Компании и действуют до одностороннего прекращения Продукта и настоящих Условий Компанией. |
| 4. Պրոդուկտից օգտվող մասնակիցները.<br>4.1. Մասնակից կարող են դառնալ այն անձինք, ովքեր պահպանել են սույն Կանոնների բոլոր պայմանները միաժամանակ: Մասնակից չեն կարող հանդիսանալ հետևյալ անձինք՝<br>4.1.1. Իրավաբանական անձինք.<br>4.1.2. 18 տարեկանը չլրացած անձինք.<br>4.1.3. «Ֆրիդոմ Ֆինանս Արմենիա» ՍՊԸ-ի աշխատակիցները.<br>4.1.4. Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող անձինք.<br>4.1.5. մինչև Վեբինարի ավարտը Ընկերությում գործող/դադարած բրոքերային հաշիվ ունեցող/ունեցած անձինք,<br>4.1.6. սույն Կանոնների 2.1.1. և/կամ 2.1.2 ենթակետում նշված գործողություններից որևիցե մեկը չկատարած և/կամ ոչ պատշաճ կատարած անձինք, և/կամ այն անձինք, ովքեր չեն համապատասխանում և/կամ չեն պահպանել սույն Կանոնների պահանջներից որևիցե մեկը. | **4. Участники, пользующиеся Продуктом и:**<br>4.1. Участниками могут стать физические лица, выполнившие все условия настоящих Правил одновременно. Участниками не могут быть следующие лица:<br><br>4.1.1. Юридические лица;<br>4.1.2. Лица до 18 лет;<br>4.1.3. Сотрудники ООО «Фридом Финанс Армения».<br><br>4.1.4. Лица, не являющиеся гражданами Республики Армения.<br>4.1.5. Лица, имеющие или имевшие действующий, или закрытый брокерский счёт в Компании до завершения Вебинара.<br><br>4.1.6. Лица, не выполнившие и/или ненадлежащим образом выполнившие одно из действий, указанных в подпунктах 2.1.1 и/или 2.1.2 настоящих Правил, и/или лица, которые не соответствуют и/или не соблюдали хотя бы одно из требований настоящих Правил. |

| | |
|---|---|
| 4.2. Կանոնների մասին տեղեկատվությունը սահմանվում են սույն Պայմաններով, ինչպես նաև հրապարակված են www.ffin.am կայքում: | 4.2. Информация об условиях определяется настоящими Условиями, а также опубликована на сайте www.ffin.am. |
| **5. Մասնակցության և նվեր ստանալու կարգը.**<br>5.1. Մասնակցելու համար անհրաժեշտ է կատարել սույն Կանոնների բոլոր պայմանները միաժամանակ: Հաճախորդն ընդունում է, որ սույն Պայմաններից որևիցե մեկին չհամապատասխանելու դեպքում վերջինս սույն Պայմանների իմաստով չի հանդիսանում մասնակից և Ընկերությունը սույն Պայմաններից բխող որևէ պարտավորություն չունի Հաճախորդի հանդեպ:<br>5.2. Մասնակիցը, հաստատելով Ընկերության «Ֆիզիկական անձի Գործարար հիմնական պայմաններին միանալու» Դիմումը, ընդունում և հաստատում է սույն Կանոններում սահմանված բոլոր պայմանները և ընդունում է նվիրատվությունը:<br>5.3. Այն դեպքում, երբ Հաճախորդը պատշաճ կատարել է սույն Կանոնների 2.1.1. և 2.1.2 ենթակետով ստանձնած գործողությունները և համապատասխանում է սույն Կանոնների բոլոր պահանջներին, ներառյալ՝ պահպանել է Կանոնների բոլոր պահանջները, ապա միայն այդ դեպքում Ընկերությունը կարող է Հաճախորդի հաշվին փոխանցել մինչև 10 հատ նվեր բաժնետոմս:<br>5.4. Նվիրատվության պայմանագրի առարկա կարող է հանդիսանալ «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» բաց բաժնետիրական ընկերություն (ԲԲԸ) բաժնետոմսը:<br>5.5. Ընկերությունն իրավունք միակողմանիորեն փոխարինել «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» արժեթուղթը մեկ այլ արժեթղթով և/կամ փոփոխել (նվազեցնել) արժեթղթի քանակը ըստ իր հայեցողության: | **5. Порядок участия и получения подарка.**<br>5.1. Для участия необходимо одновременно выполнить все условия, установленные настоящими Правилами. Клиент признаёт, что в случае несоответствия хотя бы одному из условий настоящих Правил он не считается участником в смысле настоящих Правил, и Компания не несёт никаких обязательств перед Клиентом, вытекающих из Условий.<br>5.2. Участник, утверждая Заявление о присоединении к Регламенту оказания услуг от физического лица Компании, принимает и подтверждает все условия, установленные настоящими Правилами, и соглашается на получение подарка.<br>5.3. Только в том случае, если Клиент надлежащим образом выполнил действия, предусмотренные подпунктами 2.1.1 и 2.1.2 настоящих Правил, и соответствует всем требованиям настоящих Правил, включая соблюдение всех положений Правил, Компания может перечислить на счёт Клиента до 10 подарочных акций.<br>5.4. Предметом договора дарения может быть акция открытое акционерное общество «ТЕЛЕКОМ АРМЕНИЯ».<br>5.5. Компания имеет право в одностороннем порядке заменить акцию «ТЕЛЕКОМ АРМЕНИЯ» другой ценной бумагой и/или изменить (уменьшить) количество акций по своему усмотрению. |

| | |
|---|---|
| 5.6. Մասնակիցը չի կարող ինքն ընտրել բաժնետոմսը և/կամ բաժնետոմսերի քանակը:<br>5.7.Յուրաքանչյուր մասնակից կարող է նվեր ստանալ մինչև 10 բաժնետոմս:<br>5.8. Բաժնետոմսը փոխանցվում է Freedom Broker Armenia առևտրային հարթակի անձնական հաշվում՝ «ոչ առևտրային հաշիվ» բաժնում: Բոլոր դեպքերում բաժնետոմսի ստացման հետ կապված բոլոր ռիսկերը կրում է Հաճախորդը, իսկ ծախսերը՝ Ընկերությունը:<br>5.9. Ընկերություն չի երաշխավորում և որևէ խոստում չի տալիս բաժնետոմսի արժեքի հետ կապված, ինչպես նվերը փոխանցելու պահին, այնպես էլ՝ հետագա ժամանակահատվածի համար: Նվեր բաժնետոմսը կարող է լինել նաև փոքրարժեք և/կամ արժեք չունենալ: Հաճախորդը ընդունում և համաձայն է, որ բաժնետոմսի արժեքը կարող է փոփոխվել շուկայի պայմանների կամ ցանկացած այլ գործոնների արդյունքում, որոնք դուրս են Ընկերության վերահսկողությունից: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում այն կորուստների կամ վնասների համար, որոնք կարող են առաջանալ նման փոփոխությունների հետևանքով: Ընդունելով նվերը, Հաճախորդը համարվում է նախազգուշացված և ընդունում է նաև Բաժնետոմսի հետ կապված բոլոր, այդ թվում նաև, բայց չսահմանափակվելով՝ ֆինանսական ռիսկերը:<br>5.10. Հաճախորդն իրավունք չունի Ակցիայից բխող իր մասնակցության իրավունքը և/կամ նվեր ստանալու իրավունքը զիջել և/կամ ցանկացած այլ կերպ փոխանցել որևէ երրորդ անձի: | 5.6. Участник не может самостоятельно выбирать акцию либо изменить количество акций.<br>5.7. Каждый участник может получить до 10 акций в качестве подарка.<br>5.8. Акция передаётся на личный счёт в торговой платформе Freedom Broker Armenia, в разделе «не торговый счёт». Во всех случаях все риски, связанные с получением акции, несёт Клиент, а расходы: Компания.<br>5.9. Компания не гарантирует и не даёт никаких обещаний относительно стоимости акции — как на момент её передачи, так и в будущем. Подарочная акция может иметь низкую стоимость и/или не иметь стоимости вовсе. Клиент признаёт и соглашается с тем, что стоимость акции может изменяться в зависимости от рыночных условий или любых других факторов, не зависящих от Компании. Компания не несёт ответственности за убытки или ущерб, которые могут возникнуть в результате таких изменений. Принимая подарок, Клиент считается предупреждённым и принимает на себя все риски, связанные с акцией, включая, но не ограничиваясь, финансовыми рисками.<br>5.10. Клиент не имеет права передавать и/или каким-либо образом уступать третьим лицам своё право на участие в Продукте, и/или право на получение подарка. |
| **6. Բողոքները և դրանց վավերականության ժամկետը** | **6. Жалобы и срок их действия** |

| | |
|---|---|
| 6.1. Ակցիայի վերաբերյալ բողոք պետք է ուղղել «Ֆրիդոմ Ֆինանս Արմենիա» ՍՊԸ-ին +37412252252 հեռախոսահամարով, info@ffin.am էլ. հասցեով կամ գրել Ձեր անձնական Tradernet հաշվի «հայտեր և առաջարկներ» բաժնում: Բողոքի գրանցման ամսաթիվ է համարվում կատարված զանգի/ ուղարկված նամակի ամսաթիվը: | 6.1.Любые жалобы по поводу акции следует направлять по телефону ООО «Фридом Финанс Армения» +37412252252, по адресу info@ffin.am или написать обращение в разделе «Запросы и пожелания» в личном кабинете Tradernet. Датой регистрации жалобы считается дата совершенного звонка/отправленного письма. |
| 6.2. Մասնակիցը պետք է մանրամասն ու մատչելի ներկայացնի բողոքի բովանդակությունը: Բողոքում պետք է նշված լինի մասնակցի անուն, ազգանուն, հայրանունը, կոնտակտային հեռախոսահամար և բրոքերային հաշվի համարը, ինչպես նաև մասնակցի էլեկտրոնային հասցեն՝ նրա բողոքին պատասխանելու համար: | 6.2. Участник должен предоставить подробное и доступное содержание жалобы. В жалобе должны быть указаны Имя, Фамилия, Отчество участника, контактный телефон и номер брокерского счета, а также электронный адрес участника для ответа на его жалобу. |
| 6.3. Բոլոր բողոքները կքննարկվեն՝ Ընկերության կողմից դրանք ստանալու օրվանից սկսած 15 աշխատանքային օրվա ընթացքում: | 6.3. Все жалобы будут рассмотрены Компанией в течение 15 рабочих дней с даты их получения. |
| 6.4. Ընկերությունը դիտարկում է բողոքները՝ հիմնվելով սույն Կանոնների վրա: | 6.4. Компания рассматривает жалобы, основываясь на настоящих Правилах. |
| 6.5. Բողոքի առարկայի վերաբերյալ Ընկերության որոշումը վերջնական է: | 6.5. Решение Компании по предмету жалобы является окончательным. |
| 6.6. Մասնակիցը Ընկերության որոշման մասին կտեղեկացվի հեռախոսով կամ էլեկտրոնային փոստով, կամ Հարթակի միջոցով, կամ Ընկերության Գործարար հիմնական պայմաններով սահմանված այլ միջոցներով: | 6.6. Участник будет уведомлен о решении компании по телефону, электронной почте или другими способами, предусмотренными Основными положениями бизнеса Компании. |
| 6.7. Բոլոր վեճերն ու տարաձայնությունները, որոնք կարող են առաջանալ պետք է լուծվեն ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան: | 6.7. Все споры и разногласия, которые могут возникнуть, должны решаться в соответствии с действующим законодательством РА. |
| 6.8. Բողոքներն ընդունվում և քննարկվում են ակցիայի ընթացքում: | 6.8. Жалобы на акцию принимаются и рассматриваются в ходе действия акции. |
| 6.9. Սույն Պայմանները կազմված են հայերեն և ռուսերեն լեզուներով, իսկ հակասություն | 6.9. Настоящие Условия составлены на армянском и русском языках, при этом в случае возникновения противоречий приоритет имеет армянская версия. |

| | |
|---|---|
| առաջանալու դեպքում գերակայությունը տրվում է հայերենին: | |